

ՄՐՅՈՒՅԹ RN#20-007

*Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ
ծրագրի շրջանակներում թունելային տիպի ջերմոցի տեղադրման*

Գնառաջարկի հրավեր

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ 26 մայիսի 2020թ.

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ 10 հունիսի, 2020թ., ժամը 16:00

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամը ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքի համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքի մասնագրերը:

Ապրանքները պետք է լինեն նոր չօգտագործված:

Ջերմոցը պետք է տեղադրվի Գեղարքունիքի մարզի, Օռվակ համայնքում սկզբից մինչև վերջ, այսինքն «սոժ կոօչ» եղանակով:

“Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի ամբողջությամբ տեղադրելուց հետո:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը**, պետք է **մինչև 2020 թ. հունիսի 10-ը , ժամը 16:00** ներկայացվի “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝

<http://card.am/hy/tenders>

համապատասխան մրցույթի «*հարց ու պատասխան*» հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆՔՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. Գները: Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. Գնառաջարկների գնահատում: Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____ (Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք. Երևան, Ազատության 1\21-40

Մենք (*Կազմակերպության անունը*) առաջարկում ենք առաքել RN#20-007 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1	Թունելային տիպի ջերմոց	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի (*օրերի քանակը*) օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է (*օրերի քանակը թվերով և բառերով*) օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ. փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք

- Կամար՝ երկարությունը 13 մետր, ծավալ՝ վիճակում 10 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 50x30x2.5 մմ:
- Կամար՝ երկարությունը 9 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x40x2.5 մմ:
- Կամարի ամրեցում՝ 14 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x30x2.5 մմ:
- Ֆերմաների ամրեցում՝ առաջին և վերջին, յուրաքանչյուր կողմում 3 հատ 2,5 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 60x60x2.5 մմ:
- Դռան համարնախատեսված հատվածիները և ի ամրեցում 2 մետր, յուրաքանչյուր կողմում: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x30x2.5 մմ:
- Ֆերմաների ոտքեր՝ յուրաքանչյուր կողմում 15 հատ և 4 հատ առաջին և վերջին՝ ֆերմայի յուրաքանչյուր կողմում, նվազագույնը 0.4 մետր հողի մեջ՝ հողի մեջ գտնվող հատվածը բետոնապատ: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ կլոր նոր d40 2.5 մմ:
- Դուռ 2 հատ՝ չափերը 2x2x2 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x40x2 մմ:
- "Ֆերմայի հիմքեր՝ յուրաքանչյուր կողմում 15 հատ, բարձրությունը 1.5 մետր, որոնք պետք է ամրեցվեն ֆերմայի ոտքերի մեջ: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 60x60x2.5 մմ"
- Կամարների ամրեցում: Բոլոր 15 կամարների մեջտեղով ամրեցում 45 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 50x30x2 մմ:
- Ֆերմայի հիմքերի ամրեցում՝ յուրաքանչյուր կողմում 45 մետր՝ հիմքերի 0.5 մետր բարձրության վրա, որի վրա ամրացվելու են պրոֆիլ՝ զսպանակով: Օգտագործվող նյութը

մետաղական խողովակներ քառանկյուն նոր 50x30x2 մմ:

11. "Ֆերմաների ամրեցում՝ կամարից ֆերմայի հիմքեր ամրեցում 2 մետր երկարությամբ, յուրաքանչյուր կողմում 15 հատ: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x40x2 մմ":

12. Պատուհան 2 հատ: Այն պետք է համապատասխանի 1 և 2 կետերի չափին: Պետք է լինի դեպի դուրս բացվող՝ ջերմոցի ներսից ռեդուկտորով: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 50x30x2 մմ: Տռուր 2-3 մմ հաստությամբ, ռեդուկտորը առնվազն 2 տարվա երաշխիքով:

13. Ֆերմաների ամրեցում՝ առաջին և վերջին, յուրաքանչյուր կողմում 1 հատ 4 մետր: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 60x60x2.5 մմ:

14. "Ֆերմայի հիմքերի ամրեցում՝ յուրաքանչյուր կողմում 45 մետր՝ հիմքերի 1.5 մետր բարձրության վրա, որի վրա ամրացվելու են յուրաքանչյուր կողմում 2 հատ պրոֆիլ՝ զսպանակով: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր: Օգտագործվող երկաթը նոր 50x30x2 մմ քառանկյուն":

15. Ֆերմայի հիմքերի ամրեցում՝ 4 մ երկարությամբ խաչաձև երկաթներ, յուրաքանչյուր կողմում 1-2, 7-8, 14-15 և վերջին հիմքերի արանքում: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x30x2.5 մմ:

16. Ֆերմայի կամարների ամրեցում՝ 4 մ երկարությամբ խաչաձև երկաթներ՝ ընդհանուր 16 մետր երկարությամբ յուրաքանչյուր կողմում՝ 1-2, 7-8, 14-15 և վերջին կամարների արանքում: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x30x2 մմ:

17. Ֆերմայի 2 համարի կամարների ամրեցում՝ 4 մ երկարությամբ խաչաձև երկաթներ՝ ընդհանուր 16 մետր երկարությամբ յուրաքանչյուր կողմում՝ 1-2, 7-8, 14-15 և վերջին կամարների արանքում: Օգտագործվող նյութը մետաղական խողովակներ քառանկյուն նոր 40x30x2 մմ:

18. Ջերմոցային թաղանթը՝ հունական արտադրության TUV 3728 AD 150 միկրոնի կամ համարժեք, ֆերմայի վերին թաղանթը երկտակ փչովի::

19. Պրոֆիլ զսպանակով 2 հատ զսպանակի տեղադրման հնարավորությամբ, 2 ական պրոֆիլ անցկացված 14 համարին, 1 ական 10 համարին:


20. "Կողային բարձրացման ձողը առնվազն 3/4 նոր մետաղական խողովակ, իր վրա փաթաթվող պլյունկան պետք է ամրցված լինի նկարում պատկերված ամրակներով, յուրաքանչյուր 1 մետրը մեկ":

21. Բոլոր երկաթային մասերը անհրաժեշտ է ներկել ժանգոտվող ներկով: Եռակցման և ամրեցման աշխատանքները իրականացնել որակով և բարեխիղճ:


22. Ֆերմայի հիմքերի առաջին և վերջին հատվածները 2-ու կողմում էլ պետք է լինեն ջերմոցային թաղանթով պատված

Կառուցվող ջերմոցի տարածքը գտվում Վարդենիս քաղաքի մոտ: Տարածքի ընդհանուր ունի որոշակի թեքություն, հողը կավային է և հողում առկա են քարեր: Կառուցվող ջերմոցը ունենալու է 10 մետր լայնություն, 45 մետր երկարություն և կամարի մեջտեղի հատվածից 4 մետր բարձրություն: Ֆերմայի հիմքերի բարձրությունը պետք է լինի 1.5 մետր: Կառուցվող ջերմոցը պետք է դիմանա մինչև 80 կմ/ժ արագության քամուն, 1 մ2 մակերեսում մինչև 30 կգ ձյան շերտին: Ունենա 2- ական դուռ և պատուհան: Կողքի հատվածներում 50 սմ բարձրությունից մինչև 150 սմ բարձրության վրա ունենա հնարավորություն ջերմոցային թաղանթի բարձրացման՝ մեխանիկական պտուտակի օգնությամբ, Բարձրացվող հատվածում յուրաքանչյուր ֆերմայի հիմքերի արանքում անհրաժեշտ է անցկացնել ռեզինե պարաններ, որոնք պետք է ամրեցված լինեն ամրակներին: Օգտագործվող բոլոր նյութերը պետք է լինեն նոր: Օգտագործվող մետաղական խողովակները և քառանկյունները պետք է լինեն բարձր որակի (ոչ Պարսկական արտադրության):

1-ին Ա.15-րդ հատվածներ



Տերմայի հիմքեր կողքից



2 Կամարների միջև ամրեցումներ

